

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ» ԿԱՅՔՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Կայքում նկատվել են լեզվական զանազան անճշտություններ:

Ամփոփագիրը կազմելիս այս անգամ նույնպես վրիպակներն անտեսել ենք: Կե-
տադրական սխալներին առանձին չենք անդրադարձել: Դրանց մասին խոսել ենք այն
դեպքում, երբ բերված նախադասություններում եղել են նաև այլ սխալներ: Նշենք,
սակայն, որ դրանք նույնպես շատ են: Այս հանգամանքին պետք է ուշադրություն
դարձնել:

Ստորև ներկայացնում ենք նկատված սխալների օրինակներ:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Ապրիլի 18-ին 63-ամյա հոր անհետ կորելու մասին ոստիկանության Մեղրիի
բաժնում» («Վեճի ժամանակ սպանել է», 19.04.2024):

Ճիշտ է նշված բայի ոչ թե կորել, այլ կորչել ձևը: Հոլովելիս չ սոսկաձանցը
պահպանվում է:

Պետք էր գրել՝ **կորչելու** մասին:

«.... ՀՀ վարչապետի և Ադրբեջանի նախագահի հետ ԱՄՆ պետքարտուղար Էնթո-
նի Բլինքենի նախաձեռնած հեռախոսազանգերը ևս մեկ անգամ փաստում է»
(«ԱՄՆ-ն ասում է», 29.04.2024):

Խախտված է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը:

Հարկավոր էր գրել. «.... ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի **հեռախոսազան-
գերը** ևս մեկ անգամ **փաստում են**»:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Տեղեկություններ են տարածվել, որ *հայ-ռուսական սլավոնական համալսարանում* այսօր» («Սլավոնական համալսարանում ահաբեկչական սպառնալիքի մասին ահազանգ է ստացվել», 19.04.2024):

Ուսումնական հաստատությունների անունները գրվում են մեծատառով:

Հարկավոր էր գրել՝ **Հայ-ռուսական սլավոնական համալսարանում**

«.... քաղաքապետարանի մի շարք աշխատակիցներ ոստիկանների հետ շրջում են Երևանի տարբեր փողոցներով և *անգրավվում փողոցում* առևտրականների ապրանքը» («Երևանի քաղաքապետարանը աշխատանք է առաջարկում», 19.04.2024), «Առևտրականը, որի ապրանքը ևս *անգրավվել* էին, «Հայկական ժամանակ»-ի հետ զրույցում ասաց.... » (նույն տեղում):

Անգրավել բայը գրվում է մեկ *վ*-ով: Երկու *վ*-ով գրվում է այն դեպքում, երբ կազմվում է դրա կրավորական ձևը:

Առաջին նախադասության մեջ անհարկի կրկնվում է, ավելորդ է *փողոցում* բառը:

Պետք էր գրել. «.... քաղաքապետարանի մի շարք աշխատակիցներ ոստիկանների հետ շրջում են Երևանի տարբեր փողոցներով և **անգրավում** առևտրականների ապրանքը», «Առևտրականը, որի ապրանքը ևս **անգրավել** էին, «Հայկական ժամանակի» հետ զրույցում ասաց»:

Երկրորդ նախադասությունը, պահպանելով կրավորական ձևը, կարելի էր կազմել նաև այսպես. «Առևտրականը, որի ապրանքը ևս **անգրավվել էր**, «Հայկական ժամանակ»-ի հետ զրույցում ասաց»:

«Հումորիստի խոսքով՝ ինքը քաղաքականությամբ չի զբաղվում, և իրեն *վրդով-վեցրել* է, որ որոշ լրատվամիջոցներ ու օգտատերեր» («Քեզ փող են տալիս, անում ես», 30.04.2024):

Սխալը նույն բնույթի է. *վրդովել* բառը ևս գրվում է մեկ *վ*-ով: Երկու *վ*-ով գրվում է այն ժամանակ, երբ կազմվում է կրավորականը:

Պետք էր գրել. «Հումորիստի խոսքով՝ ինքը քաղաքականությամբ չի զբաղվում, և իրեն **վրդովեցրել** է, որ որոշ լրատվամիջոցներ ու օգտատերեր» (կամ՝ «Հումորիստի խոսքով՝ ինքը քաղաքականությամբ չի զբաղվում, և ինքը **վրդովվել** է, որ որոշ լրատվամիջոցներ ու օգտատերեր»):

ՍԽԱԼ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

«Քննարկվել են նաև Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի **կարիքները** և դրանց հասցեագրման հնարավոր տարբերակները, ինչպես նաև նրանց ինտեգրման մեխանիզմների ֆինանսավորման հարցերը» («ՀՀ ֆինանսների նախարարության պատվիրակությունը», 18.04.2024):

Քննարկվել կարող են ոչ թե կարիքները, այլ, ինչպես ֆինանսավորման դեպքում, դրանց վերաբերող հարցերը:

Ճիշտ կլիներ գրել, օրինակ. «**Քննարկվել են** նաև Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի **կարիքներին**, դրանց հասցեագրման հնարավոր տարբերակներին, ինչպես նաև նրանց ինտեգրման մեխանիզմների ֆինանսավորմանը վերաբերող հարցերը»:

«Լիզ Քրիստոֆերսենը նշել է, որ թեև Ադրբեջանի արդարադատության նախարարը խոստացել էր, որ հաջորդ այցի ժամանակ իրենց նման հնարավորություն կտրվի, սակայն **դա տեղի չի ունեցել**» («ԵԽԽՎ վերադառնալու համար», 18.04.2024):

Հնարավորություն տալը այնպիսի բան չէ, որ տեղի ունենա կամ չուրե՛նա:

Կարելի էր գրել, օրինակ. «Լիզ Քրիստոֆերսենը նշել է, որ թեև Ադրբեջանի արդարադատության նախարարը խոստացել էր, որ հաջորդ այցի ժամանակ իրենց նման հնարավորություն կտրվի, սակայն **չի տրվել**» («ԵԽԽՎ վերադառնալու համար»):

«Ընդհանուր առմամբ ձերբակալվել է 7 անձ» («Թուրքիայում ահաբեկչության նախապատրաստման», 29.04.2024):

Այստեղ **ընդհանուր առմամբ**-ի հարց չկա: Այն ավելորդ է:

Կարելի էր պարզապես գրել. «Ձերբակալվել է 7 անձ»:

«Ռազմական գործողություններից ի վեր սա բրիտանական արքայական ընտանիքի անդամի առաջին այցն է Ուկրաինա» («Բրիտանական ընտանիքի անդամը՝ դքսուհի Սոֆին, այցելել է Ուկրաինա», 30.04.2024):

Նշված հատվածը ճիշտ չէ ոչ միայն ձևակերպման առումով, այլև ոճական:

Կարելի էր գրել, օրինակ. «**Ռազմական գործողությունների սկսվելուց հետո** սա բրիտանական արքայական ընտանիքի անդամի առաջին այցն է Ուկրաինա»:

ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԻԱԼՆԵՐ

«Այցն *իրականացվել է ԵՄ կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին»* ծրագրի շրջանակներում» («Լիտվացի գործընկերները *պատրաստակամություն են հայտնել աջակցել ՀՀ ՆԳ նախարարությունում ընթացող բարեփոխումներին*», 30.04.2024):

իրականացնել բառի գործածության չարաշահումների մասին Լեզվի կոմիտեն հրապարակել է հորդորակ¹, որն առաջարկում ենք ընթերցել:

Բացի այս՝ այն անհարկի նաև կրկնվել է:

Կարելի էր գրել. «Այցը **կատարվել է** ԵՄ կողմից *իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին»* ծրագրի շրջանակներում»:

Սխալ կա նաև վերնագրում. ճիշտ չէ խնդրառությունը:

Պետք էր գրել. («Լիտվացի գործընկերները **պատրաստակամություն են հայտնել աջակցելու** ՀՀ ՆԳ նախարարությունում ընթացող բարեփոխումներին»):

¹ Լեզվի կոմիտե. <http://www.langcom.am>, <https://tinyurl.com/522hz78x>

ԼԵԶՎԱՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Տուժել է հայտնի շենքերից մեկը՝ որը տեղացիներն անվանում են «Կիվալովի ամրոց» կամ «Հարրի Փոթերի ամրոց»: Այնտեղ է տեղակայված Օդեսայի իրավաբանական ակադեմիայի շենքերից մեկը, որում հրդեհ է բռնկվել» («Օդեսայում հրթիռակոծության հետևանքով զոհեր կան», 30.04.2024):

Ըստ գրվածի՝ շենքը տեղակայված է շենքում:

Պետք էր շարադրել այլ կերպով:

Կա նաև կետադրական սխալ. առաջին նախադասության մեջ «մեկը» բառից հետո բութի փոխարեն հարկավոր էր դնել ստորակետ:

ՏԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հանդիպման ընթացքում նախարարի կողմից ներկայացվել է Լեոնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց առաջնային կարիքների հասցեագրմանն ուղղված ՀՀ կառավարության աջակցության ծրագրերը, ինչպես նաև մշակվող միջնաժամկետ ծրագրերի վերաբերյալ մանրամասներ» («ՀՀ ֆինանսների նախարարության պատվիրակությունը», 18.04.2024), «Նախարարը շնորհակալություն է հայտնել ՀՀ կառավարության ...» («նույն տեղում):

Կառավարություն բառը հարկավոր էր գրել մեծատառով:

Առաջին նախադասության մեջ կա նաև թվային անհամաձայնություն:

Պետք է լիներ. «.... ներկայացվել են.... ծրագրերը, մանրամասներ»:

Նման դեպքերում գերադասելի է կողմից բառը չգործածել և անհարկի չստեղծել կրավորական կառույցներ: Այս մասին ևս Լեզվի կոմիտեն հրապարակել է հորդորակ², որը նույնպես առաջարկում ենք ընթերցել:

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«.... սկսվել է Լեոնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ կոնֆինգենտի դուրսբերման գործընթացը» («Կրեմլը մեկնաբանել է», 22.04.2024):

² Լեզվի կոմիտե. <http://www.langcom.am>, <https://tinyurl.com/ye24ekmd>

Կոնտրինգենտի հայերեն համարժեքները *քանակակազմ, հավաքակազմ* բառերն են: Կարծում ենք՝ այստեղ ճիշտ կլիներ գործածել **հավաքակազմ**-ը:

*Լեզվական վերահսկողության բաժնի
գլխավոր մասնագետ՝ Գուրգեն Միքայելյան*